

**ՀՅԴ ներկայացուցիչները մասնակցեցին  
Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստին  
ՀՅԴ Բյուրոյի անդամ Մարիո Նալպանտյանը ընտրվեց ԱՊՀ-ի,  
Կովկասի եւ Սեւ Ծովի հանձնախմբի համանախագահ**

ԵՐԵՎԱՆ (18 նոյեմբերի 2008թ.) -- 17-18 նոյեմբերին, Մեխիկոյի Փուերտո Վայարտա քաղաքում գումարվեց Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստը, նախագահությամբ կազմակերպութեան նախագահ, Հունաստանի ՓԱՍՈՔ կուսակցության ղեկավար Ճորճ Փափանտրեուի եւ գլխավոր քարտուղար՝ Լուիս Այալայի:

Խորհրդի նիստին մասնակցում էր ՀՅԴ պատվիրակությունը, գլխավորությամբ ՀՅԴ Բյուրոյի անդամ, Ընկերվար միջազգայնականում ՀՅԴ մշտական ներկայացուցիչ Մարիո Նալպանտյանի եւ մասնակցությամբ Ընկերվար միջազգայնականի փոխ-նախագահ Մարիա Թիթիզյանի (Հայաստան) եւ Անահիտ Ստեփանյանի (Արեւմտյան ԱՄՆ):

Խորհրդի գլխավոր թեմաներն էին.

ա) Զաղաքականության վերադարձը. կառավարության եւ կարգավորող շրջանակների կրիտիկական դերը՝ համաշխարհային կայուն եւ արդար տնտեսությունն ապահովելու գործում.

բ) ԱՄՆ ընտրություններից հետո՝ միջազգային համագործակցության եւ բազմակողմանիության նոր հնարավորություններ.

գ) Առաջացող եւ զարգացող տնտեսությունների մեջ աշխատանք՝ ընկերային արդարության, ներառման եւ համայնքի համար. առաջնահերթություններ եւ նոր մոտեցումներ.

դ) Անարդարության դեմ եւ շրջանային համագործակցության բարելավում. Հայացք՝ Լատին Ամերիկայից եւ Կարիպիաններից:

Հաշվի առնելով, որ Խորհրդի այս նիստը առաջինն էր Հունիսին Հունաստանում կայացած կազմակերպության համագումարից հետո, Խորհուրդը զբաղվեց կազմակերպական հարցերով: Կազմվեցին կազմակերպության հանձնախմբերը եւ ընտրվեց նրանց ղեկավարությունը: Որոշվեց կազմել ԱՊՀ-ի, Կովկասի եւ Սեւ Ծովի հանձնախումբ՝ նախկին ԱՊՀ-ի եւ Կովկասի հանձնախմբի փոխարեն: Հանձնախմբի համանախագահներ ընտրվեցին Մարիո Նալպանտյանը (Հայաստան) եւ Ալեքսանդրա Դոբոլիին (Հունգարիա):

Նոյեմբերի 16-ին, Մարիա Թիթիզյանը որպես փոխ-նախագահ մասնակցել էր կազմակերպության նախագահության նիստին:

### **Մասնակցություն՝ Կանանց ընկերվար միջազգայնականի Բյուրոյի նիստին**

Նոյեմբերի 14-15-ին, տեղի ունեցավ Կանանց ընկերվար միջազգայնականի Բյուրոյի նիստը, նախագահությամբ կազմակերպության նախագահ Փիա Լիկատելիի եւ գլխավոր քարտուղար Մառլեն Յասսի:

Բյուրոյի նիստին ՅՅԴ-ի կողմից մասնակցում էին Մարիա Թիթիզյանը (Յայաստան) եւ Անահիտ Ստեփանյանը (Արեւմտյան ԱՄՆ):

Նիստի ընդհանուր բնաբանն էր Գյուղական շրջանների կանանց դերը համաշխարհային զարգացման մեջ:

Որպես գլխավոր զեկուցաբերներից մեկը, գյուղական շրջաններում կանանց առողջապահության հարցերի մասին զեկույցով հանդես եկավ Ընկերվար միջազգայնականի փոխ-նախագահ Մարիա Թիթիզյանը: Նա կենտրոնացավ Յայաստանում այդ խնդրի շուրջ, անդրադառնալով նաեւ միջազգային ընդհանուր պատկերին եւ Ադրբեջանում ու Վրաստանում առկա խնդիրներին:

**ՀՅԴ ներկայացուցիչները մասնակցեցին  
Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստին  
ՀՅԴ Բիւրոյի անդամ Մարիո Նալպանտեանը ընտրուեց ԱՊՀ-ի,  
Կովկասի եւ Սեւ Ծովի յանձնախմբի համանախագահ**

ԵՐԵՎԱՆ (18 նոյեմբերի 2008թ.) -- 17-18 նոյեմբերին, Մեխիկոյի Փուերտոյ Վայարտայ քաղաքում գումարուեց Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստը, նախագահութեամբ կազմակերպութեան նախագահ, Յունաստանի ՓԱՍՈԶ կուսակցութեան ղեկավար Ճորճ Փափանտրեուի եւ գլխաւոր քարտուղար՝ Լուիս Այալայի:

Խորհրդի նիստին մասնակցում էր ՀՅԴ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ընկերվար միջազգայնականում ՀՅԴ մշտական ներկայացուցիչ Մարիոյ Նալպանտեանի եւ մասնակցութեամբ Ընկերվար միջազգայնականի փոխ-նախագահ Մարիայ Թիթիզեանի (հայաստան) եւ Անահիտ Ստեփանեանի (արեւմտեան Ամն):

Խորհրդի գլխաւոր թեմաներն էին.

ա) Զաղաքականութեան վերադարձը. կառավարութեան եւ կարգաւորող շրջանակների կրիտիկական դերը՝ համաշխարհային կայուն եւ արդար տնտեսութիւն ապահովելու գործում.

բ) ԱՄՆ ընտրութիւններից յետոյ՝ միջազգային համագործակցութեան եւ բազմակողմանիութեան նոր հնարաւորութիւններ.

գ) Առաջացող եւ զարգացող տնտեսութիւնների մէջ աշխատանք՝ ընկերային արդարութեան, ներառման եւ համայնքի համար. առաջնահերթութիւններ եւ նոր մօտեցումներ.

դ) Անարդարութեան դէմ եւ շրջանային համագործակցութեան բարելաւում. Հայեացք՝ Լատին Ամերիկայից եւ Կարիպիաններից:

Հաշուի առնելով, որ Խորհրդի այս նիստը առաջինն էր Յունիսին Յունաստանում կայացած կազմակերպութեան համագումարից յետո, Խորհուրդը զբաղուեց կազմակերպական հարցերով: Կազմուեցին կազմակերպութեան յանձնախմբերը եւ ընտրուեց նրանց ղեկավարութիւնը: Որոշուեց կազմել Ապի-ի, Կովկասի եւ Սեւ Ծովի յանձնախումբ՝ նախկին Ապի-ի եւ Կովկասի յանձնախմբի փոխարէն: Յանձնախմբի համանախագահներ ընտրուեցին Մարիոյ Նալպանտեանը (Հայաստան) եւ Ալեքսանդրա Դոբուլիին (Հունգարիա):

Նոյեմբերի 16-ին, Մարիայ Թիթիզեանը որպէս փոխ-նախագահ մասնակցել էր կազմակերպութեան նախագահութեան նիստին:

## **Մասնակցութիւն՝ Կանանց ընկերվար միջազգայնականի Բիւրոյի նիստին**

Նոյեմբերի 14-15-ին, տեղի ունեցաւ Կանանց ընկերվար միջազգայնականի Բիւրոյի նիստը, նախագահութեամբ կազմակերպութեան նախագահ Փիայ Լիկատելիի եւ գլխաւոր քարտուղար Մառլէն Յասսի:

Բիւրոյի նիստին Յոյ-ի կողմից մասնակցում էին Մարիայ Թիթիզեանը (հայաստան) եւ Անահիտ Ստեփանեանը (արեւմտեան ԱՄՆ):

Նիստի ընդհանուր բնաբանն էր Գիւղական շրջանների կանանց դերը համաշխարհային զարգացման մէջ:

Որպէս գլխաւոր զեկուցաբերներից մէկը, գիւղական շրջաններում կանանց առողջապահութեան հարցերի մասին զեկոյցով հանդէս եկաւ Ընկերվար միջազգայնականի փոխ-նախագահ Մարիայ Թիթիզեանը: Նա կենտրոնացաւ Յայաստանում այդ խնդրի շուրջ, անդրադառնալով նաեւ միջազգային ընդհանուր պատկերին եւ Ադրբեջանում ու Վրաստանում առկայ խնդիրներին:

#####

MD-2008-21